ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2133-Ա «23» ապրիլի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի Հ.312-Ա ԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 20-Ի Հ.2082-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով Ալբերտ Թորոսյանի 21.04.2026թ. հ.Դ-40761-26 և «Մերարմինվեսթ» ՍՊԸ-ի 21.04.2026թ. հ.Դ-40462-26 դիմումները.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2025 թվականի փետրվարի 04-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.312-Ա որոշման հավելվածի 8-րդ կետը:

3.Երևանի քաղաքապետի 2026թ. ապրիլի 20-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.2082-Ա որոշման հավելվածի 8-րդ կետի 5-րդ սյունակից հանել «ընդհ. բաժն. 2.7քմ» բառերը:

4. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

6. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
23.04.2026թ.
հ. 2133-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Ռուբեն Ավետյան, Էմմա Մարտիրոսյան	Նոր-Խարբերդ 24-րդ փողոց, հ.78	այգետնակ	Ռուբեն Ավետյանին և Էմմա Մարտիրոսյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ Նոր-Խարբերդ 24-րդ փողոցի հ.78 հասցեում գտնվող այգետնակին /վկ. հ.983027/ տրամադրել հասցե՝ Նոր Խարբերդի այգեգործական տարածք, 24-րդ փողոց, հ.68	011134REYNSJ	
2	Հրաչյա և Ռաֆիկ Վարդանյաններ	Ն. Չարբախ 7-րդ փողոց, հ.36 և հ.38	հողամաս	Անշարժ գույքերի միավորման 20.04.2026թ. հ. 2507 պայմանագրով, Հրաչյա և Ռաֆիկ Վարդանյաններին պատկանող, Ն. Չարբախ 7-րդ փողոցի հ.36 և հ.38 հասցեներում գտնվող հողամասերին տրամադրել մեկ միասնական հասցե՝ Ն. Չարբախ 7-րդ փողոց, հ.36-38	01113YZZ3HZJ	
3	Ալբերտ Թորոսյան	Կոմիտասի պողոտա, հ.15 շենք, հ.220	տարածք	Անշարժ գույքի մասի տարաժամկետ առուվաճառքի 23.02.2026թ. հ.2371 պայմանագրով, Ալբերտ Թորոսյանի կողմից ձեռք բերված Կոմիտասի պողոտայի հ.15 շենքի հ.220 հասցեում գտնվող տարածքի 92.6քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Կոմիտասի պողոտա, հ.15 շենք, շինություն հ.220/5	01033S9EBTGU	
4	Սևակ Ալեքյան և Լիլիթ Պետրոսյան	Գ-1 թաղամաս, հ.2/18	հողամաս	Գ-1 թաղամասի հ.2/18 հասցեում գտնվող 219.5քմ մակերեսով հողամասին /հիմք՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 12.12.2025թ. հ.ԵԴ2/3840/02/25 վճիռ, 144.8քմ բնակելի տուն/ տրամադրել հասցե՝ Գ-1 թաղամաս, հ.2/96	01013FN83NNP	

5	Միքաել Ագուլյան և Վարդուհի Ջանոյան	Գ-1 թաղամաս, հ.2/18	հողամաս	Գ-1 թաղամասի հ.2/18 հասցեում գտնվող 211.4քմ մակերեսով հողամասին /հիմք՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 27.02.2026թ. հ.ԵԴ2/5247/02/25 վճիռ, 141.1քմ բնակելի տուն/ տրամադրել հասցե՝ Գ-1 թաղամաս, հ.2/97	01013MV5V9RX	
6	«ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ	Արշակունյաց պողոտա, հ.51 շենք, հ.34ա	բնակարան	Անշարժ գույքի առուվաճառքի 02.02.2026թ. հ.2080 պայմանագրով, «ԳԱԶԵԼ ՖԻՆԱՆՍ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված Արշակունյաց պողոտայի հ.51 շենքի հ.34ա հասցեում գտնվող բնակարանին տրամադրել հասցե՝ Արշակունյաց պողոտա, հ.51 շենք, բն.34/1	011132RUFZSL	
7	Վահագն Նահապետյան /լիազորված անձ/ Հայկ Օհանջանյան	Ծովակալ Իսակովի պողոտա, հ.40 շենք, հ.37	բնակարան	Հայկ Օհանջանյանին սեփականության իրավունքով պատկանող, Ծովակալ Իսակովի պողոտայի հ.40 շենքի հ.37 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.27032026-01-0281, ընդհ. բաժն. 1.2քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 42.74քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Ծովակալ Իսակովի պողոտա, հ.40 շենք, բն.37/1	01073SYFXAKM	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**